ՀԱԱՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/80-1

ք. Երևան 26-ը դեկտեմբերի 2019թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Վ. Ուռուտյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Արմեն Եղիազարյանը, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ

պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 551890 (հինգ հարյուր հիսունմեկ հազար ութ հարյուր իննսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 6 ամիս: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N

3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո

Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	Ա/Ձ Արմեն Եղիազարյան
	ՀՀ, ք. Երևան, Նիկողայոս Տիգրանյան 14
ք. Երևան,Տերյան 74	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
«Արդշինբանկ» ՓԲԸ	Հ/Հ՝ 163058802550
Հ/Հ՝ 247010053103	ՀՎՀՀ՝ 76103027
ՀՎՀՀ՝ 01507028	
Ռեկտոր՝	
Վ. ՈՍՈՒՏՅԱՆ	Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի								Մատակարարման		
Հ/հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Միավոր գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	Գումար (ՀՀ դրամ)	Հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
1	34331300	Արգելակման կոճղակ առջևի	Հավաքածու՝ 4 կտորից բաղկացած: Մեքենայի ընթացքի արգելակման համար: Տեղադրվում է մեքենայի առջևի արգելակման սկավառակի վրա: Շեվռոլետ Կապտիվա մակնիշի 2014թ. արտադրության մեքենայի համար:	հատ	14000	1	14000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
2	34331300	Արգելակման կոճղակ հետևի	Մեքենայի ընթացքի արգելակման համար: Տեղադրվում է մեքենայի հետևի արգելակման սկավառակի վրա: Շեվռոլետ Կապտիվա մակնիշի 2014թ. արտադրության մեքենայի համար:	հատ	11000	1	11000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
3	34331300	Վառելիքամղիչ	Վառելիքամղիչ բենզինային, դիաֆրագմենտային, ցածր ճնշման, մեխանիկական փոխանցմամբ: 2014թ, արտադրության Շեվռոլե Կապտիվա մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	68000	1	68000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
5	34331300	Ջրի պոմպ	Պտուտաթևը ֆիբրից: 2012թ արտադրության, 130Զ/ուժ, ՊԱՋ 32054 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	10000	1	10000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
6	34331300	Ինդուկցիոն կոճ	Ճ-116: 2012թ արտադրության, 130Զ/ուժ, ՊԱՋ 32054 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	68000	1	6800	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
8	34331300	Հոսանքի ընդհատիչ բաշխիչ	Էլեկտրոնային: 2012թ արտադրության ՊԱՋ 32054 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	19000	1	19000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

9	42121230	Վառելիքամղիչ	Վառելիքամղիչ բենզինային, դիաֆրագմենտային, ցածր ճնշման, մեխանիկական փոխանցմամբ: 2012թ, 130Ձ/ուժ, արտադրության ՊԱԶ 32054 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	10000	1	10000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
10	34331300	Ինդուկցիոն կոճ	Ճ-114: 2000թ. արտադրության Գազել 32213 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	5000	1	5000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
11	34331300	Կոմուտատոր	Էլեկտրոնային, լարումը՝ 12Վ, 90.3734: 2000թ. արտադրության Գազել 32213 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	4000	1	4000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
12	34331300	Կայծմոմ կարճ (Այրման մոմիկ)	Մեկ բեղիկանի, պտտման բանալի 22: 2000թ. արտադրության Գազել 32213 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	1990	1	1990	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
13	34331300	Ֆիբր	Ատամների քանակը՝ 56, մեջտեղի անցքը՝ 28մմ: 2000թ. արտադրության Գազել 32213 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	8000	1	8000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
14	34331300	Կախոց	13 սմ լայնության, 14 սմ բարձրության, իր առանցքակալով: 2000թ. արտադրության Գազել 32213 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	3000	1	3000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
15	34331300	Ռադիատորի ջրի խողովակներ	Հավաքածու բաղկացած 8 հատ խողովակներից: 2000թ. արտադրության Գազել 32213 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	4000	1	4000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
16	34331300	Հարվածամեղմիչ հետևի	Լայնությունը՝ 0.09, առաջին երկարությունը՝ 0.359մ, երկրորդ երկարությունը՝ 0.579մ, քաշ՝ 4.39կգ, շրջանագծի լայնությունը՝ 4.5սմ: Յուղով: 2000թ. արտադրության Գազել 32213 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	3250	2	6500	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

17	34331300	Արգելակման կոճղակ հետևի	Հավաքածու 4 հատ: Լայնությունը՝ 0.22մ, բարձրությունը՝ 0.12մ, երկարությունը՝ 0.29մ: 2000թ. արտադրության Գազել 32213 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	5500	1	5500	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
18	34331300	Արգելակման կոճղակ առջևի	Լայնությունը՝ 0.08մ, բարձրությունը՝ 0.08մ, երկարությունը՝ 0.14մ: 2000թ. արտադրության Գազել 32213 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	3800	1	3800	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
19	34331300	Լուսարձակ	Առջևի հիմնական, գիշերային լուսավորության ապահովման լուսարձակներ: 2000թ. արտադրության Գազել 32213 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	8500	1	8500	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
20	34331300	Ապակի բարձրացնող մեխանիզմ	Առջևի դռների կողապակիների բարձրացման/իջեցման ճոպանով մեխանիզմ: 2000թ. արտադրության Գազել 32213 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	4500	1	4500	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
21	34331300	Արգելակման խողովակ	Ռետինե, ծայրամասերը երկաթից: 2000թ. արտադրության Գազել 32213 մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	1000	2	2000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
22	34331300	Գնդամատ	Միավորի քաշը՝ 617գ, լայնությունը՝ 25մմ, երկարությունը՝ 105մմ, բարձրությունը՝ 25մմ: 2003թ. արտադրության ՎԱԶ 21214 մակնիշի մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	2200	8	17600	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	8	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
23	34331300	Արգելակման կոճղակ առջևի	Լայնությունը 0.1մ, երկարությունը՝ 0.13մ, բարձրությունը՝ 0.04մ, քաշ՝ 1.045կգ, հավաքածու 4 հատ: 2003թ. արտադրության ՎԱԶ 21214 մակնիշի մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	3500	2	7000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
24	34331300	Արգելակման կոճղակ հետևի	Հավաքածու 4 կտորից բաղկացած: Լայնությունը՝ 20սմ, երկարությունը՝ 24մ, բարձրությունը՝ 9սմ: 2003թ. արտադրության ՎԱԶ 21214 մակնիշի մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	4200	2	8400	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

26	34331300	Հարվածամեղմիչ առջևի	Յուղով, երկարությունը՝ 0.32մ, լայնությունը՝ 0.05մ, քաշ՝ 1.16. բարձրությունը՝ 0.06: 2003թ. արտադրության ՎԱԶ 21214 մակնիշի մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	5000	3	15000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
27	34331300	Տանող սկավառակ	Լայնությունը՝ 0.275մ, երկարությունը՝ 0.26մ, բարձրությունը՝ 0.06մ,քաշ՝ 4.63կգ: 2003թ. արտադրության ՎԱԶ 21214 մակնիշի մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	6000	1	6000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
28	34331300	Տարվող սկավառակ	Լայնությունը՝ 0.22մ, երկարությունը՝ 0.22մ, բարձրությունը՝ 0.03մ, քաշ՝ 1.173կգ, ֆերադոյի գույնը՝ մոխրագույն: 2003թ. արտադրության ՎԱԶ 21214 մակնիշի մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	15000	1	15000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
29	34331300	Էլաստիկ մուֆտ	6 անցքով, 2003թ. արտադրության ՎԱԶ 21214 մակնիշի մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	7000	2	14000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
30	34331300	Խաչուկ	2121-2202025, լայնությունը՝ 0.07մ, երկարությունը՝ 0.07մ, բարձրությունը՝ 0.028մ, քաշ՝ 0.445: 2003թ. արտադրության ՎԱԶ 21214 մակնիշի մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	4000	2	8000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
31	34331300	Բենզինի ֆիլտր ներսի	Երկու կողմը պտուտակով, մտնող կողմի պտուտակի չափը՝ 14x1.5, ելնողը՝ 14x1.5, բարձրությունը՝ 144մմ, դրսի տրամագիծը՝ 56մմ: 2003թ. արտադրության ՎԱԶ 21214 մակնիշի մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	8500	2	17000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
32	34331300	Ձգածող	Երկարությունը՝ 0.61մ, լայնութունը՝ 0.07մ, բարձրությունը՝ 0.05մ: Հավաքածու 5 կտորից բաղկացած: 2003թ. արտադրության ՎԱԶ 21214 մակնիշի մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	17000	1	17000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
33	34331300	Սեղմող առանցքակալ	Երկարությունը՝ 0.06մ, լայնութունը՝ 0.065մ, բարձրությունը՝ 0.04մ: 2003թ. արտադրության ՎԱԶ 21214 մակնիշի մեքենայի համար:Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր,	հատ	3500	1	3500	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

			առաջին կարգի:							
34	34331300	Անվաբացքի վռան	Հավաքածու՝ 8 կտորից: 2003թ. արտադրության ՎԱԶ 21214 մակնիշի մեքենայի համար:Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	6000	1	6000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
37	34331300	Մետաղածող	Հավաքածու՝ 5 կտորից բաղկացած: 2003թ. արտադրության ՎԱԶ 21214 մակնիշի մեքենայի համար:Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	9000	2	18000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
38	34331300	Սրահի ռադիատոր	Ալյումինե: Չափերը՝ 200x190x42մմ: 2008թ. արտադրության Լադա Կալինա մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	8500	1	8500	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
39	34331300	Սրահի ռադիատորի խողովակներ	Հավաքածու՝ 2 խողովակից բաղկացած: 2008թ. արտադրության Լադա Կալինա մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	900	2	1800	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
40	34331300	Հաղորդակ դրսի	Հավաքածու: Երկարությունը՝ 123.2մմ, միջին տրամագիծը՝ 82.2մմ, պտուտակների չափերը՝ 20x1.5, ABC ատամների քանակը՝ 43, միջին տրամագիծը ABC-ի օղակի՝ 96, միացնող հատվածը անիվների կողմից՝ 22: 2008թ արտադրության Լադա Կալինա մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	7500	1	7500	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
41	34331300	Անվակունդի առանցքակալ	Երկարությունը՝ 75մմ, լայնությունը՝ 75մմ, բարձրությունը՝ 45մմ: 2008թ արտադրության Լադա Կալինա մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	4500	1	4500	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
42	34331300	Գնդամատ	Երկարությունը՝ 105մմ, լայնությունը՝ 75մմ, բարձրությունը՝ 75մմ: 2008թ արտադրության Լադա Կալինա մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	3000	2	6000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
43	34331300	Արգելակման կոճղակ առջևի	Երկարությունը՝ 12սմ, լայնությունը՝ 8սմ, բարձրությունը՝ 8մմ: 2008թ արտադրության Լադա Կալինա մեքենայի համար:	հատ	4500	1	4500	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20

			Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:							օրացուցային օրվա ընթացքում
44	34331300	Ձգաձողի ծայրակալներ	Երկարությունը՝ 0.645մ, լայնությունը՝ 0.08մ, բարձրությունը՝ 0.08մ: 2008թ արտադրության Լադա Կալինա մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	7500	2	15000	<<, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
45	34331300	Դիմապակու խոզանակներ	Երկարությունը՝ 0.34մ, լայնությունը՝ 0.03մ, բարձրությունը՝ 0.02մ: 2008թ արտադրության Լադա Կալինա մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	1500	2	3000	<<, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
46	34331300	Խլացուցիչի մեջտեղի կտոր	Երկարությունը՝ 1.25մ, լայնությունը՝ 0.29մ, բարձրությունը՝ 0.16մ: 2008թ արտադրության Լադա Կալինա մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	16000	1	16000	<<, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
47	34331300	Բենզինի ֆիլտր	Բարձրությունը՝ 130մմ, լայնությունը՝ 93.3մմ: 2012թ արտադրության Տոյոտա Պռադո մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	15000	1	15000	<<, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
48	34331300	Արգելակման կոճղակ հետևի	Հավաքածու՝ 4 հատ: 2012թ արտադրության Տոյոտա Պռադո մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	19000	1	19000	<<, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
49	34331300	Արգելակման կոճղակ առջևի	2012թ արտադրության Տոյոտա Պռադո մեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:	հատ	14000	1	14000	<<, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
51	34331300	Արգելակման կոճղակ	Հավաքածու՝ 4 կտորից բաղկացած: Մեքենայի ընթացքի արգելակման համար: Տեղադրվում է մեքենայի առջևի արգելակման սկավառակների և հետևի արգելակման թմբուկների վրա: 2007թ. արտադրության ԳԱԶ 3102 մակնիշի ավտոմեքենայի համար:	հատ	5500	2	11000	<<, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
53	34331300	Հարվածամեղմիչ առջևի	Տեղադրվում է ավտոմեքենայի առջևի մասում՝ յուրաքանչյուր անիվին առանձին, զսպանակի տատանումները մեղմելու համար: 2007թ. արտադրության ԳԱԶ 3102 մակնիշի ավտոմեքենայի համար: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բարձր կարգի:	հատ	13000	2	26000	<<, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

54	34331300	Վռան /втулка/	2007թ. արտադրության ԳԱԶ 3102 մակնիշի ավտոմեքենայի առջևի ռագատկաների վերևի և ներքևի վռաններ (վտուլկա): Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բարձր կարգի:	հատ	2000	8	16000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	8	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
61	34331300	Գնդամատ	2007թ. արտադրության ԳԱԶ 3102 ավտոմեքենայի համար, վերին և ստորին: Գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բարձր կարգի:	հատ	7500	2	15000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
62	42411700	հիդրավլիկ ամբարձիկ (դոմկրատ)	Առավելագույն բարձրացվող քաշը առնվազն ՝3տ, Ամբարձիկի բարձրությունը առնվազն 194մմ,բարձացման բարձրությունը առնվազն-372մմ:	հատ	12000	1	12000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
63	31681120	էլեկտրական պոմպ (անվադող փչելու)	Կոմպակտ էլեկտրական սարք՝ անվադողը փչելու համար: Լիցքավորվում է մեքենայի 12Վ ստանդարտ բնիկից	հատ	9000	1	9000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

Ծանոթություն

- *Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Բոլոր ապրանքները պետք է լինեն գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված, բոլորովին նոր, առաջին կարգի:

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ք. Երևան,Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 247010053103
ՀՎՀՀ՝ 01507028
Ռեկտոր՝

Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Արմեն Եղիազարյան
ՀՀ, ք. Երևան, Նիկողայոս Տիգրանյան 14
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ՝ 163058802550
ՀՎՀՀ՝ 76103027

Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Միավոր գինը (ՀՀ դրամ)	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ .՝ ըստ ամիսների, այդ թվում*		
						XI	XII	Գումար (ՀՀ դրամ)
1	34331300	Արգելակման կոճղակ առջևի	հատ	1	14000	14000	14000	14000
2	34331300	Արգելակման կոճղակ հետևի	հատ	1	11000	11000	11000	11000
3	34331300	Վառելիքամղիչ	հատ	1	68000	68000	68000	68000
5	34331300	Ջրի պոմպ	հատ	1	10000	10000	10000	10000
6	34331300	Ինդուկցիոն կոճ	հատ	1	68000	6800	6800	6800
8	34331300	Հոսանքի ընդհատիչ բաշխիչ	հատ	1	19000	19000	19000	19000
9	42121230	Վառելիքամղիչ	հատ	1	10000	10000	10000	10000
10	34331300	Ինդուկցիոն կոճ	հատ	1	5000	5000	5000	5000
11	34331300	Կոմուտատոր	հատ	1	4000	4000	4000	4000
12	34331300	Կայծմոմ կարճ (Այրման մոմիկ)	հատ	1	1990	1990	1990	1990
13	34331300	Ֆիբր	հատ	1	8000	8000	8000	8000
14	34331300	Կախոց	հատ	1	3000	3000	3000	3000
15	34331300	Ռադիատորի ջրի խողովակներ	հատ	2	4000	4000	4000	4000
16	34331300	Հարվածամեղմիչ հետևի	հատ	1	3250	6500	6500	6500
17	34331300	Արգելակման կոճղակ հետևի	հատ	1	5500	5500	5500	5500
18	34331300	Արգելակման կոճղակ առջևի	հատ	1	3800	3800	3800	3800
19	34331300	Լուսարձակ	հատ	1	8500	8500	8500	8500
20	34331300	Ապակի բարձրացնող մեխանիզմ	հատ	2	4500	4500	4500	4500
21	34331300	Արգելակման խողովակ	հատ	8	1000	2000	2000	2000
22	34331300	Գնդամատ	հատ	2	2200	17600	17600	17600
23	34331300	Արգելակման կոճղակ առջևի	հատ	2	3500	7000	7000	7000
24	34331300	Արգելակման կոճղակ հետևի	հատ	3	4200	8400	8400	8400
26	34331300	Հարվածամեղմիչ առջևի	հատ	1	5000	15000	15000	15000
27	34331300	Տանող սկավառակ	հատ	1	6000	6000	6000	6000
28	34331300	Տարվող սկավառակ	հատ	2	15000	15000	15000	15000
29	34331300	Էլաստիկ մուֆտ	հատ	2	7000	14000	14000	14000
30	34331300	Խաչուկ	հատ	2	4000	8000	8000	8000
31	34331300	Բենզինի ֆիլտր ներսի	հատ	1	8500	17000	17000	17000
32	34331300	Ձգածող	հատ	1	17000	17000	17000	17000
33	34331300	Սեղմող առանցքակալ	հատ	1	3500	3500	3500	3500
34	34331300	Անվաբացքի վռան	հատ	1	6000	6000	6000	6000

37	34331300	Մետաղաձող	հատ	2	9000	18000	18000	18000
38	34331300	Սրահի ռադիատոր	հատ	1	8500	8500	8500	8500
39	34331300	Սրահի ռադիատորի խողովակներ	հատ	2	900	1800	1800	1800
40	34331300	Հաղորդակ դրսի	հատ	1	7500	7500	7500	7500
41	34331300	Անվակունդի առանցքակալ	հատ	1	4500	4500	4500	4500
42	34331300	Գնդամատ	հատ	2	3000	6000	6000	6000
43	34331300	Արգելակման կոճղակ առջևի	հատ	1	4500	4500	4500	4500
44	34331300	Ձգաձողի ծայրակալներ	հատ	2	7500	15000	15000	15000
45	34331300	Դիմապակու խոզանակներ	հատ	2	1500	3000	3000	3000
46	34331300	Խլացուցիչի մեջտեղի կտոր	հատ	1	16000	16000	16000	16000
47	34331300	Բենզինի ֆիլտր	հատ	1	15000	15000	15000	15000
48	34331300	Արգելակման կոճղակ հետևի	հատ	1	19000	19000	19000	19000
49	34331300	Արգելակման կոճղակ առջևի	հատ	1	14000	14000	14000	14000
51	34331300	Արգելակման կոճղակ	հատ	2	5500	11000	11000	11000
53	34331300	Հարվածամեղմիչ առջևի	հատ	2	13000	26000	26000	26000
54	34331300	Վռան /втулка/	հատ	8	2000	16000	16000	16000
61	34331300	Գնդամատ	հատ	2	7500	15000	15000	15000
62	42411700	Հիդրավլիկ ամբարձիկ (դոմկրատ)	հատ	1	12000	12000	12000	12000
63	31681120	Էլեկտրական պոմպ (անվադող փչելու)	հատ	1	9000	9000	9000	9000
		ԸՆԴԱՄԵՆԸ						**551890**

Ծանոթություն. Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 30.12.2019թ.:

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ք. Երևան,Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247010053103
ՀՎՀՀ՝ 01507028
Ռեկտոր՝

Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Արմեն Եղիազարյան
ՀՀ, ք. Երևան, Նիկողայոս Տիգրանյան 14
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163058802550
ՀՎՀՀ՝ 76103027

Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ